Տվյալ պարագայում Հայցվորի կողմից նախապես վճարվել է 80,000 ՀՀ դրամի չափով պետական տուրք, ուստի, հաշվի առնելով, որ հայցը բավարարվել է, Դատարանը գտնում է, որ Պատասխանողից հօգուտ Հայցվորի պետք է բռնագանձել 80,000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

-

(IV) Եզրափակիչ մաս

Հիմք ընդունելով վերոգրյալ իրավական և փաստական հիմքերը և հիմնավորումները, ինչպես նաև ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 3-րդ, 109-րդ, 179-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 362-րդ հոդվածներով և 27.2-րդ գլխով՝

Վ Ճ Ռ Ե Ց

1. «ՍԵՅՍՄՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ 04.12.2025թ. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից «Սեյսմշին» ՍՊԸ-ի և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի միջև 23.02.2024թ. կնքված թիվ ՀՀՔԿԳՀԱՇՁԲ-24/17 գնման պայմանագրի միակողմանի լուծումը անվավեր ճանաչելու, ինչպես նաև 12.12.2025թ. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղարի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումը անվավեր ճանաչելու պահանջների մասին, բավարարել:

1.1 Անվավեր ճանաչել 04.12.2025թ. «Սեյսմշին» ՍՊԸ-ի և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի միջև 23.02.2024թ. կնքված թիվ «ՀՀՔԿԳՀԱՇՁԲ-24/17» ծածկագրով ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղարի կողմից կազմված գնման պայմանագրի միակողմանի լուծումը:

1.2 Անվավեր ճանաչել 12.12.2025թ. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղարի «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին» թիվ 10-2025 որոշումը:

2. ՀՀ քաղաքաշինության կոմիտեից հօգուտ «Սեյսմշին» ՍՊ ընկերության բռնագանձել 80,000 ՀՀ դրամ՝ որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

Դատավոր՝ **Մալվինա Հարությունյան**

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IEDA-8D51-4CA4-B408 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am